ԱՆԱՀԻՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
Խաչատուր Աբովյանի անվան ՀՊՄՀ
Բան. գիտ. թեկնածու
Էլհասցե՝ anahit1881@inbox.ru

ԱԾԱԿԱՆ//ԳՈՅԱԿԱՆ ԱՐԺԵՔՆԵՐ ՀԱՄԱՏԵՂՈՂ ՊԱՐԶ ԲԱՌԵՐԸ ԳՐԱԲԱՐՈՒՄ

Ամփոփում

Գրաբարում կան բառեր, որոնց ձևաբանական արժեքը երկփեղկված է տարբեր խոսքի մասերի միջև. դրանք հանդես են գալիս մեկից ավելի խոսքիմասային արժեքների համատեղումներով: Այդ բառերը կոչվում են խոսքիմասային տարարժեք բառեր, իսկ քերականական երևույթը՝ խոսքիմասային տարարժեքություն[1]:

Խոսքիմասային տարարժեք բառերը, լինելով տարժամանակյա իրողություններ, լեզվի համաժամանակյա կտրվածքում հավասարապես կարող են հանդես գալ մեկից ավելի ձևաբանական արժեքների համատեղումներով ու համապատասխան շարահյուսական գործառույթ-ներով:

Սույն հոդվածում մենք քննել ենք ածական//գոյական ձևաբանական արժեքներ համատեղող պարզ բառերը գրաբարում, որոնք, խոսքիմասային փոխանցումներով պայմանավորված, ձեռք են բերել մեկից ավելի խոսքիմասային իմաստ: Այդ կարգի բառերի ձևաբանական արժեքները իրացվում են շարահյուսական կիրառության մեջ:

Բանալի բառեր և արտահայտություններ. ածական, գոյական, պարզ բառեր, ձևաբանական արժեք, խոսքիմասային փոխանցում, առարկայական իմաստ, հատկանշային իմաստ, տարարժեքություն, շարահյուսական մակարդակ:

Ներածություն

Ածական//գոյական արժեքներ համատեղող բառերն անկախ գործածությամբ կիրառվելիս գոյական են, իսկ լրացման դերում (գոյականի վրա դրվելիս) ածական են:

---

[1] Տե՛ս Լ. Խաչատրյան, Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985, էջ 32-33: Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996, էջ 39:

Խոսքի մասերի հարաբերակցության մասին խոսելիս Մ. Սեբաստացին առանձին-առանձին սահմանում է գոյականը՝ իբրև «մասն բանի, որ զէութիւն իրին նշանակէ», և ածականը՝ իբրև «ձայնք նշանականք, որք միշտ նշանակեն զինչութիւնս և կամ զորպիսութիւնս իրաց»[2], գոյականի և ածականի միջև դնում է «միջական» անունները, որոնք հանդես են գալիս մերթ ածականի արժեքով, մերթ՝ գոյականի[3]։

Մ. Չամչյանը, ած.//գոյ. արժեքներ համատեղող բառերի պարագայում գործածում է «միջակք» տերմինը՝ նշելով, որ որոշ անուններ, թեև ընդհանրապես գոյական են համարվում, սակայն մասնավորաբար կարող են գործածվել որպես ածական[4]։

Խոսքիմասային փոխանցումների գործոնով պայմանավորված՝ գոյականները աստիճանաբար կարող են ձեռք բերել հատկանշային, ածականին բնորոշ իմաստ, այսինքն՝ պահպանելով նախնական առարկայական իմաստը՝ գոյականները իրենց իմաստային դաշտ են ներառում նաև հատկանշային իմաստ՝ երկփեղկվելով խոսքիմասային արժեքով։

Խոսքիմասային փոխանցումների ընթացքում բառերը կարող են համատեղել նախկին և նոր խոսքիմասային արժեքի հատկանիշները[5]։

Որոշիչ-որոշյալ կապակցության շրջանակում խոսելով գոյականի հատկանշային իմաստ ձեռք բերելու մասին՝ Հ. Ավետիսյանը նշում է, որ «Գրաբարում որոշիչ է դառնում նաև գոյական անունը, որը զրկվում է իր առարկայական նշանակությունից և իմաստով մոտենում է ածականին, վերջինիս պես արտահայտում որակական այլ հատկանիշներ»[6]։

Մեթոդաբանությունը

Բառերի իմաստաարժեքային փոփոխությունների գործընթացը լեզվական համակարգի շարժունության հետևանք է, որ լայն առումով ընդգրկում է լեզվի զարգացման տարժամանակյա, նեղ առումով՝ համաժամանակյա կտրվածքները։ Այլ կերպ ասած՝ բառիմաստի և խոսքիմասային արժեքների հարաբերակցված փոփոխությունները լեզվի

---

[2] Մ. Սեբաստացի, Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730, էջ 193, 231։

[3] Նույն տեղում, էջ 226։

[4] Մ. Չամչեան, Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779, էջ 156։

[5] Լ. Խաչատրյան, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2021, էջ 255։

[6] Հ. Ավետիսյան, Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում, Ե., 1972, էջ 89։

զարգացման միևնույն փուլի շրջանակում թե նրանից դուրս միշտ կրում են տարժամանակյա բնույթ։

Այդ առումով որպես հետազոտության մեթոդ ընտրվել են համաժամանակյա և տարժամանակյա եղանակները։

* * *

Գրաբարի մակարդակում առանձնացվում են պարզ կամ «անփոփոխ», ածանցավոր, բարդ բառեր[7], որոնք ունեցել են խոսքիմասային տարբեր արժեքներ։

Սույն հոդվածում մենք քննության ենք առել ածական//գոյական արժեքների համատեղումով հանդես եկող պարզ բառերը։

Գրաբարի ածական//գոյական երկարժեք պարզ բառերը կարելի է դասակարգել ըստ իմաստային և գործառական հատկանիշների.

ա) բառեր, որոնք ցույց են տալիս անձ և անձի հատկանիշ,

բ) բառեր, որոնք ցույց են տալիս անձ և թե՛ անձի, թե՛ իրի հատկանիշներ։

Իմաստային-գործառական հատկանիշով էլ կարելի է որոշել ածական//գոյական արժեքներ համատեղող բառերի խոսքիմասային արժեքները. եթե դրանք հանդես են գալիս որպես անձ, ապա գոյական են և ունեն առարկայական իմաստ, իսկ եթե հատկանիշ են մատնանշում, ապա ածականի գործառույթով են հանդես գալիս և ունեն հատկանշային իմաստ։

ա) Անձ և անձի հատկանիշ ցույց տվող բառեր

Մ. Ասատրյանը նշում է, որ հայերենում շատ ածականներ ու գոյականներ ձևով տարբերակված չեն։ Հաճախ անկախ բառը իր ձևով և իմաստով կարող է լինել և՛ ածական, և՛ գոյական[8]։ Բայց քանի որ հայերենում ավելի տարածված է ու նկատելի ածականի գոյականացումը (և ոչ հակառակը), պետք է նշել, որ դրանք ևս ենթարկվում են այդ ընդհանուր կանոնին։

Այսպես գրաբարում **աղքատ, ամուրի, այրի, աւագ, բարբարոս, խաբեբայ, խորթ, ծեր, սրիկայ** և այլ բառեր մայր խոսքիմասային արժեքով ածական են և լրացնում են անձնանիշ գոյականի։

Այս կարգի բառերը՝ իբրև գոյականներ, անձ են ցույց տալիս, իսկ իբրև ածականներ՝ անձի հատկանիշ են մատնանշում և իմաստային զանազան նրբերանգներ են դրսևորում։ Ըստ արտահայտած իմաստի

---

[7] Տե՛ս մեր հոդվածը՝ «Բարդ բառերի ածական //գոյական տարարժեքությունը գրաբարում» (ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., № 2-3 (26-27), 2014, էջ 13-21)։

[8] Մ. Ասատրյան, Ժամանակակից հայոց լեզու, Ձևաբանություն, Ե., 2002, էջ 31։

բազմազանության՝ այս բառերը կարելի է դասակարգել թեմատիկ մի քանի խմբերի մեջ.

1. անձ և ժամանակային առումով անձի տարիք ցույց տվող բառերի խումբ,
2. անձնային որակներ ցույց տվող բառերի խումբ,
3. միջանձնային հարաբերություններ ցույց տվող բառերի խումբ,
4. սոցիալ-քաղաքական բնորոշումներ ցույց տվող բառերի խումբ։

1. Անձ և ժամանակային առումով անձի տարիք մատնանշող բառերի թեմատիկ խմբի մեջ մտնում են հետևյալ երկարժեք բառերը՝ **աւագ, երէց, երիտասարդ, ծեր** և այլն։

Հմմտ. **Աւագ** – ած. 1. Տարիքով ավելի մեծ, երեց. Արձակէր արս երիս **աւագս** (Ագաթ., 451)։ 2. Մեծապատիվ, երևելի. Այս Աբգարոս կոչէր **աւագ** այր, վասն առաւել հեզութեանն եւ իմաստութեանն (Խոր., 142)։ 3. Մեծ, կարևոր. Ոչ ինչ **աւագ** եմ ժամանակաւ (Փարպ., 154)։ գոյ. Իշխան, պետ. Վաղվաղակի առնոյր զհրովարտակսն զառաջին սիրելի **յաւագաց** իւրոց (Բ. Մակ. Ը. 9)։

2. Անձնային որակներ և սոցիալական կարգավիճակ ցույց տվող բառերի թեմատիկ խմբի մեջ են դասվում հետևյալ երկարժեք բառերը. **ամուրի, այրի, խորթ**, **ստրուկ, սրիկայ** և այլն։

Անձի որակային կամ վիճակային հատկանիշներ մատնանշող ածականները կարող են գոյականանալ բառակապակցության կրճատման հետևանքով։ Գոյականական բառակապակցության կրճատման դեպքում ածականը հանդես է գալիս փոխանվանական գործառույթով, ներառում է գոյականի իմաստ ու արժեք, և ձեռք բերելով նոր բառաքերականական հատկանիշներ՝ գոյականանում է[9]։

Սրիկայ – ած. Դատարկապորտ, ստահակ, սինլքոր. Ժողովէին առ Յեփթայէ արք **սրիկայք** (Դատ. ԺԱ. 3)։ գոյ. Սուսերավոր ավազակ. **Սրիկայք** եւ սրավարք ի միասին հորդան տուեալք քինախնդիր լինէին (Յհ. Կթ., 325)։

3. Միջանձնային փոխհարաբերություններ ցույց տվող բառերի թեմատիկ խմբի մեջ մտնում են հետևյալ երկարժեք բառերը. **թշնամի, ժառանգ, ոսոխ** և այլն։

Հմմտ. **Թշնամի** – ած.//գոյ. Ոսոխ, հակառակորդ, չարակամ (մարդ). ած. Այլ թագաւորն Պապ յամենայն ժամ էր **թշնամի** մեծի քահանայապետին (Բուզ., 182)։ գոյ. Տացէ զքեզ Տէր ի պարտութիւն առաջի **թշնամեաց** (Բ. Օրէնք. ԻԸ. 25)։

---

[9] Լ. Խաչատրյան, Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, էջ 92։

4. Սոցիալ-քաղաքական իմաստային թեմատիկ խմբի մեջ մտնում են հետևյալ երկարժեք բառերը. **աղքատ, համբակ** և այլն։

Հմմտ. **Աղքատ** – ած. 1. Չքավոր, տնանկ, չունևոր. Զի այրին այն **աղքատ** աւելի արկ (Ղուկ., ԻԱ. 3)։ 2. Հետին, նվաստ. **Ցաղքատ** չքաւորութենէ փախչել (Պիտ.)։ 3. Տկար, չնչին. Ըստ Աղբիոնի **աղքատ** մտածութեան (Խոսր.)։ գոյ. Մուրացիկ, տառապյալ՝ չքավոր մարդ. Զանկեալն հնձոցն քոց **աղքատին** եւ պանդխտին թողուցուս (Ղեւտ. ԻԳ. 22)։

Վերը նշված օրինակներից կարելի է եզրակացնել, որ գրաբարում անձ և անձի հատկանիշ ցույց տվող երկարժեք բառերը ձևավորվել են ածականի նախնական իմաստի ընդարձակման և գոյականի նշանակության ներառման ուղիով։ Բառերի այսպիսի վերաիմաստավորումը, ինչպես նշել ենք, հետևանք է նաև ածական+գոյական բառակապակցության կրճատման։

Հմմտ. **գերի մարդ – գերի, թշնամի մարդ – թշնամի, սրիկայ մարդ – սրիկա**։

Ինչպես տեսնում ենք, լրացումը այս դեպքերում արտահայտում է լրացյալի իմաստը, և այս կարգի բառերի վերաիմաստավորումը արտահայտվում է նաև շարահյուսական մակարդակում, ինչն էլ ձևաբանական մակարդակում առաջ է բերում խոսքիմասային արժեքի երկփեղկում։

Բ. Անձ և անձի ու իրի հատկանիշ ցույց տվող բառեր

Գրաբարում անձ և անձի ու իրի հատկանիշ ցույց տվող երկարժեք պարզ բառերի շարքում անձի ու անձի հատկանիշ ցույց տվող բառերի իմաստներն ավելի իշխող են, իսկ իրի հատկանշային իմաստները հիմնականում փոխաբերական գործածության հետևանք են։

Այսպես, **կոյս** բառը նշանակում է թե՛ անձ և թե՛ անձի հատկանիշ։

Հմմտ. **Կոյս** – ած. 1. Չամուսնացած, օրիորդ. Անգոսնեաց **կոյս** դուստր Սիոնի (Եսայ. ԼԷ. 22)։ 2. Կուսամայր (Աստվածամոր մակդիրը). Զօրինակն սուրբ **կուսին** Մարիամու ունէր (Ագաթ., 214)։ գոյ. 1. Աղջիկ. Եթէ ոք խաբեսցի **զկոյս** (Ելք. ԻԲ. 16)։ 2. Կրոնավորուհի, միանձնուհի. **Կուսանք** սրբոյ եկեղեցւոյ ոչ վասն այնորիկ պահեն զկուսութիւն (Եզն., 287)։

Կոյս բառը փոխաբերական իմաստով կարող է լրացնել առարկայական իմաստ ունեցող բառերի և արտահայտել իրի հատկանշային իմաստ.

Հմմտ. **Կոյս** – ած. փխբ. Անարատ, մաքուր, առաքինի. «Ահա **կոյս** յղութիւն կալցի եւ ծնցի որդի» (Ղեւ., 74)։

Կամ՝ **հսկա** բառն ունի «շատ մեծ, ահագին, հսկայական, վիթխարի» ածականական իմաստ, ինչպես՝ **հսկա մարդ, սար** և այլն, սակայն բառիմաստի հետագա ընդլայնումով ոչ գծային բառաստեղծմամբ դրանից

նախագրային շրջանում զարգացել է «հաղթանդամ և արտակարգ ուժի տեր անձնավորություն» գոյականական իմաստը[10]:

Գրաբարում անձ և անձի ու իրի հատկանիշ ցույց տվող երկարժեք պարզ բառերից են՝ **խորթ, ծանօթ** և այլն:

Հմմտ. **Խորթ** – ած. 1. Ոչ արյունակից. անհարազատ. Եթէ առանց խրատու լինիցիք, ապա **խորթք** իցէք եւ ոչ արդիք (Եբր. ԺԲ. 8): 2. փխբ. Անսովոր, կեղծ. Փութա՛ ոչ շփոթել զերգս սաղմոսաց քոց **խորթ** խորհրդով (ՆՀԲ): գոյ. Ապօրինի զավակ, հարճորդի. Որդւոցն բարձրացելոցն անարգելով զծնողն, համայն եւ **խորթոցն** ըստ արժանեացն զօտար հայրն ու զեկամուտ յօրայն (Խոր., 359):

Եզրակացություն

Այսպիսով, տարբեր խոսքի մասերի պատկանող միավորները, գտնվելով այս կամ այն խմբի մեջ (գոյական, ածական և այլն), այսինքն՝ խմբավորված լինելով ընդհանուր իմաստային, ձևային-ձևաբանական և շարահյուսական որոշակի առանձնահատկություններով, այնուամենայնիվ լեզվի պատմական զարգացման ընթացքում ինչ-որ չափով ենթարկվում են տեղաշարժերի, որովհետև լեզուն, այսպես կոչված, քարացած երևույթ չէ, այլն հանդիսանում է մշտական զարգացող իրողություն[11]:

Ինպես նկատեցինք մեր քննության ծիրի մեջ, ածականները գոյականների են փոխանցվում շարահյուսական կիրառության հիմքի վրա, երբ ածականը, հոդ ստանալով և հոլովվելով, ներառում է նաև լրացյալ գոյականի առարկայական իմաստը[12]:

Ածական անունների հաճախադեպ գոյականաբար գործածությունը կարող է երկփեղկել նրանց հիմնական խոսքիմասային նշանակությունը և նրանց հաղորդել գոյականի իմաստ ու արժեք:

Հատկապես անձնանիշ գոյականներին լրացնող ածականները, փոխանվանաբար գործածվելով, լեզվում ամրակայվում են և՛ որպես հատկանշային բառեր, և՛ որպես անձնանիշ գոյականներ:

Լեզվական փաստերի քննությունը ցույց է տալիս, որ գրաբարի ածական//գոյական արժեքներ համատեղող պարզ բառերը բավականին ինքնատիպ դրսևորումներ ունեն: Դրանք գրաբարի քերականական աշխատություններում հանդիպում են «միջակք» կամ «միջական»

[10] Ս. Հայրապետյան, Ոչ գծային բառաստեղծումը հայերենում, Ե., 2011, էջ 158:
[11] Վ. Համբարձումյան, Լեզվաբանության հիմունքներ, Ե., 2019, էջ 288:
[12] Հ. Հարությունյան, Ածական անուն, դերանուն, Ե., 1976, էջ 41:

եզրույթներով։ Իրենց բառիմաստային առանձնահատկություններով պայմանավորված՝ այդ բառերը արտահայտում են՝

ա) անձ և անձի հատկանիշներ,

բ) անձ և անձի ու իրի հատկանիշներ։

Քերականական հղումներ

ած. – ածական

գոյ. - գոյական

Բնագրային օրինակների սկզբնաղբյուրներ

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1909։

Բուզ. - Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1913։

Եզն. - Եզնկայ Կողբացւոյ՝ Բագրեւանդայ եպիսկոպոսի Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826։

Խոսր. – Խոսրովու Անձեւացեաց եպիսկոպոսի Մեկնութիւն ժամանակագրութեան, Պոլիս, 1840։

Խոր. - Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփխիս, 1913։

Ղեւ. – Պատմութիւն Ղեւոնդեայ մեծի վարդապետի Հայոց, Ս. Պետերբուրգ, 1887։

Յհ. Կթ. - Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912։

ՆՀԲ - Նոր բառգիրք Հայկազեան լեզուի, երկասիրութիւն երից վարդապետաց

յաշակերտութենէ մեծին Մխիթարայ աբբահօր՝ Հ. Գաբրիէլի Աւետիքեան, Հ. Խաչատրոյ Սիւրմէլեան, Հ. Մկրտչի Աւգերեան, հ. հ. Ա-Բ, Վենետիկ, 1836 – 1837։

Պիտ. – Յաղագս պիտոյից (Մ. Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1965)։

Փարպ. – Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց եւ Թուղթ առ Վահան Մամիկոնեան, Տփխիս, 1904։

Մնացած համառոտագրություններով բնագրային վկայությունները, որ վերցրել ենք Լ. Խաչատրյանի «Գրաբարի բացատրական բառարանից» (Երևան, 2003), գործածված են հայագիտության մեջ ընդունված կարգով, ինչպես՝ Դատ. (Դատաւորք), Եբր. (Թուղթ Պօղոսի առաքելոյ առ Եբրայեցիս),

Ելք (Ելք), Եսայ. (Մարգարէութիւն Եսայեայ), Ղեւտ (Ղեւտականք), Մակ. (Գիրք Մակաբայեցւոց Բ.*), Բ. Օրէնք (Երկրորդումն Օրինաց)։

Օգտագործված գրականություն

1. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզու. Ձևաբանություն, Ե., 2002։
2. Ավետիսյան Հ., Որոշիչ-որոշյալ կապակցությունը գրաբարում, Ե., 1972։
3. Խաչատրյան Լ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Ե., 1985։
4. Խաչատրյան Լ., Խոսքիմասային տարարժեքությունն արդի հայերենի կայուն կապակցություններում, Ե., 1996։
5. Խաչատրյան Լ., Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Ե., 2021։
6. Համբարձումյան Վ., Լեզվաբանության հիմունքներ, Ե., 2019։
7. Հայրապետյան Ս., Ոչ զծային բառաստեղծումը հայերենում, Ե., 2011։
8. Հարությունյան Հ., Ածական անուն, դերանուն, Ե., 1976,
9. Հարությունյան Ա., «Բարդ բառերի ածական //գոյական տարարժեքությունը գրաբարում» ՀՊՄՀ «Հայագիտական հանդես», Ե., № 2-3 (26-27), 2014, էջ 13-21։
10. Չամչեան Մ., Քերականութիւն հայկազեան լեզուի, Վենետիկ, 1779։
11. Սեբաստացի Մ., Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի, Վենետիկ, 1730։

Анаит Арутюнян

Простые слова в древнеармянском языке (грабаре), сочетающие значения прилагательного/существительного

Заключение

Ключевые слова и выражения: прилагательное, существительное, простые слова, морфологическое значение, частеречный переход, предметное

*«Աստուածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց», Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Երեւան, 1997։

значение, характеристическое значение, морфологически полисемантичные слова, синтаксический уровень.

В грабаре присутствуют слова, морфологическое значение которых расщеплено между разными частями речи; данные слова представлены комбинациями в более чем одной части речи. Эти слова называются морфологически полисемантичные слова, а грамматический феномен-морфологическая полисемия.

Многозначные слова в диахронической реалии, в синхронном аспекте языка могут в равной степени выступать в сочетаниях более чем одного морфологического значения и соответствующих им синтаксических функций.

Единицы, принадлежащие к разным частям речи, находясь в той или иной группе (имя существительное, имя прилагательное и др.), т. е. группируясь по некоторым общим семантическим, морфологическим и синтаксическим признакам, тем не менее претерпевают в той или иной степени изменения в ходе исторического развития языка, потому что язык есть постоянно развивающееся явление.

В данной статье мы рассмотрели простые слова в грабаре, сочетающие морфологические значения прилагательное/существительное, которые благодаря частеречным переходам приобрели разноценность. Морфологические значения таких слов выражены при применении синтаксических конструкций.

Прилагательное переходит в существительное на основе синтаксического применения, когда прилагательное, получая суффикс и склонение, приобретает значение предметности дополняемого существительного.

Частое употребление прилагательных в качестве существительных может расщепить их основное частеречное значение и подвергнуться субстантивации.

В частности, прилагательные, дополняющие личные существительные, будучи взаимозаменяемыми, закрепляются в языке как характеристические слова, так и личные существительные.

Слова, сочетающие значения прилагательное/существительное, встречаются в грабаре в грамматических работах под термином “срединный”.

Благодаря своим лексическим особенностям эти слова выражают:

а) личность и характеристики личности,

б) личность и характеристики личности и предмета.

Anahit Harutyunyan

Simple words in ancient Armenian language (Grabar), combining adjective/noun meanings

Conclusion

Key words and expressions: adjective, noun, simple words, morphological meaning, speech part transition, subject meaning, characteristic meaning, morphologically polysemantic words, syntactic level.

In grabar there are words with morphological meaning that is split between different parts of the speech. Combinations of more than one speech category represent those words. Those words are referred to as multiple-meaning words.

Morphologically polysemantic words in diachronic reality, in the synchronic aspect of the language, can equally combine more than one morphological meaning with the associated syntactic functions.

Units belonging to different parts of speech, being in one group or another (noun, adjective, etc.), i.e. grouped according to some common semantic, morphological and syntactic features, nevertheless undergo changes to one degree or another in the course of the historical development of language, because language is a constantly developing phenomenon.

In this article, we examined the simple words in grabar, that combine the adjective/noun morphology, and acquired multiple meaning as a result of speech part transitions. Syntactic use of such terms expresses their morphological meanings.

According to syntactic application, an adjective becomes a noun when it receives a suffix and a declension and takes on the subject meaning of the complimentary word.

Frequent use of adjectives as nouns can split their basic partial meaning and undergo substantiation.

Particularly, adjectives that go with personal nouns are entrenched in the language as characteristic terms as well as personal nouns since they are used interchangeably.

Words that combine adjective/noun meanings are met in grabar grammar books under the term "medium". Due to their lexical features, these words express:

a) personality and personality characteristics,

b) personality and characteristics of the person and subject.

Խմբագրություն է ուղարկվել 02.03.2023թ.
Հանձնարարվել է գրախոսության 25.03.2023թ.
Հրապարակման է հանձնարարվել 28.04.2023թ.